

բով ճօխացած ըլլան: Քերականական տեղեկութիւններ և բացատրութիւններ իրր զնահատելի առաւելութիւն պիտի նկատուին:

Աշխատութիւնները պէտք է յղուին առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն ի Կ. Պօլիս, մինչև 1905 տարու փետրուարի վերջը:

Եթէ երբէք ըստ նախնի սովորութեան ազատ նիւթի վրայ երկասիրութիւններ յղուած գտնուին, անոնք ըստ պատշտման և արժանաւորութեան, կամ բացառիկ մրցման մը նիւթ պիտի կազմեն և կամ յաջորդ մրցանակն պիտի պահուի: Այս տեսակ երկերն, եթէ տպագրի են, երեքական օրինակ, իսկ եթէ ձեռագրի են, մէկ օրինակ պիտի յղուին, բայց յստակ դրուած:

Յանձնաժողովոյն յղուած բոլոր աշխատութիւններ՝ մրցանակ ընդունեն կամ ոչ՝ ետ չեն դարձուիր:



ԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՕԴՈՒՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Անշուշտ կանոնաւոր ընթերցմունքը եկեղեցում մեծ ազդեցութիւն ունի հաւատացեալ ունկնդիրներին վերայ. բայց այդ ցանկալի ազդեցութիւնը գործելու համար նախ ինքն ընթերցողը պէտք է հասկանայ իւր կարդացածն: Ռուս օրթօդոքս եկեղեցին եկեղեցական գրքեր սրբագրելու անհրաժեշտութեան հետ՝ սկսել է ուշադրութիւն դարձնել կանոնաւոր ընթերցմունքի վերայ ևս: Перк. Вѣст. (№ 1- 1904) ասում է, «ամենավարպետ ընթերցողները հրապարակ չեն գալիս, նախապէս մի քանի անգամ չը կրկնելով այն՝ ինչ որ մտածում են ուրիշներին ուշադրութեան՝ առաջարկել: Եթէ տիրացուն իւր պարտքը չըհամարի տանը մի քանի անգամ կրկնել այն՝ ինչ որ եկեղեցում պէտք է կարդայ, ինչքան կուզես՝ սրբագրիլ ժամերգութեան գրքերը, միևնոյն է. միշտ էլ պէտք է նկատուեն զժուարութիւններ անձանօթ բառերի հանդիպելիս, պէտք չեղած տեղը կանգ առնել և չհասկանալ՝ կարդացածը: Այժմ արդէն սկսել են հո-

դեոր շրջաններում տեղ տեղ տիրացուի վերայ նայել որպէս ծխական հողուի գործակցի վերայ՝ բառի իսկական նշանակութեամբ: Թեմական հրատարակութիւնների մէջ արծարծուում է այն միտքը թէ, տիրացուի գործն այն է, ինչ որ է Առաւօծոյ եկեղեցու ամեն մի պաշտօնէինը՝ սկսած բարձրագունից մինչև ամենացածր՝ հաւատացեալների հոգու փրկութեան համար վաստակել: Այս խրատական է և մեզ՝ հայերիս համար:

— Առևտայ բարեկարգ վանքերում կանոնաւոր և երկիւզածութեամբ կատարուած ժամերգութիւնները, այդ վանքերի վանականների և կոյսերի խրատները ու գործունեայ կեանքը, նրանց խնամքը՝ ուսուցանելու և պաշտպանելու շրջակայքի աղքատ և անտէր երեխաներին և մերձաւորներին օգնելու այլ և այլ տեսակները, նրանց ջանքը աշխատութեամբ ձեռք բերուած միջոցներով պահպանելու և պայծառացնելու վանքերը՝— յառաջ են բերում շրջակայքի ժողովրդի մէջ խորին յարգանք դէպի այդ վանքերի վանականներն ու կոյսերը: Վերջին տարիներս այդպիսի վանքերից՝ առանձին համբաւ են ստացել Վեանեան և Վիրովեան կուսանաց վանքերը Խօլմ—Վարչաւեան կողմում: «Վարչաւեանի Գնեվինկի» մէջ նկարագրուած է Վիրովեան վանքի կոյսերի կացութիւնն ու նրանց զարմանալի գործունեայ կեանքը: Վանքում կան—փոքրահասակների ապաստանարան՝ որի մէջ տեղաւորուած են 120 երեխայք 2—3 և մինչև 8 տարեկան, գրագիտութեան դպրոց՝ ուր երեխաները բերանացի սովորում են աղօթքներ, ստանաւորներ և ծանօթանում են հաշիւների ու կարգալ դրելու հետ, օրինակելի մի դասեան դպրոց և երկդասեան եկեղեցական—ծխական դպրոց՝ գրաճանաչութեան և եկեղեցական—ծխական՝ դպրոցների համար ուսուցչուհիներ պատրաստելու: անկելանոց, ուր պատասպարուած էին նկարագրուած ժամանակ 32 հոգի, իսկ ձմեռը ժողովուում են մինչև 60 մարդ: հիւանդանոց՝ կոյսերի, աղջկանց, երեխաների և վտանգաւոր հիւանդների համար յատուկ բաժանմունքներով: Բժշկական օգնութիւն հիւանդանոցում ցոյց են տալիս կուսանոցի քոյրերը, կարմիր խաչի ընկերութիւնից նշանակուած ողորմութեան քրոջ ղեկավարութեամբ: Նրանք ոչ միայն հիւանդանոցում ու բուժանոցում պատասպարուածներին են խնամում, այլ և ընդունում են երթեկի հիւանդներ էլ: Ամեն ամիս զանազան դաւանութեան 1000 հիւանդ է դալիս վանք շրջակայքից: Աւխաի օրերին՝ ընդունելութեան ժամանակ հարիւրաւոր մարդիկ են լինում: Ամենքին էլ ձրի օգնութիւն և անվարձ դեղ է մատակարարւում: Հիւանդանոցի համար կուսանոցը ոչ սքից ոչ մի օժանդակութիւն չի

ստանում: Դեռ դարձանալին այն է, Ալերովում հոյսերը չունին խցեր և ապրում են ունկնդիրների (նոր ընդունուած) հետ. Միայն մայրապետն ունի մի փոքրիկ խուց. բայց մօտիկ ժամանակներս վախճանուած, վանքի գլխաւոր հիմնադիր, մայրապետ Աննան շատ անգամ իւր խուցն էլ էր զիջանում հիւանդներին:

«Ալերովը— օրթօդոքս ռուս վանքի նոր տիպ է, ուր առանձնանում են մարդիկ ոչ թէ իրանց անձնական իրկութեան, այլ այնտեղ անձնատուր են լինում աշխարհի ծառայողութեանը, և ամբողջովին նուիրում են ուրիշների փրկութեանը. նրանց մուրացկանութիւնից, սովամահ լինելուց, անհաւատութիւնից և տղիտութիւնից իրկելու համար»:

Այդ վանքի այժմեան մայրապետն է միանձնուհի Սոփիան, ըստ աշխարհի՝ իշխանուհի Օ. Ա. «Շախովսկայեա»:

— Ինչ որ ռուս օրթօդոքս վանքերի համար նորութիւն է, Գ. դարում, մեծն ներսէսի ժամանակ օրէնք էր Հայոց վանքերում:

— Մի քանի վանքերի մօտ կան խաչկալներ շատ բաւ արհեստանոցներ, որոնք պահանջ եղած դէպքում կարող կը լինէին դիւրութեամբ պատկերներ տալ շքեղաց եկեղեցիներին և բնակիչներին: Նոյնպիսի նշանակութիւն կարող էին ունենալ գոնէ մի քանի վանքեր, եթէ պատրաստէին եկեղեցական զգեստներ եկեղեցիների և թեմի եկեղեցական զգեստները պահեստների համար: Այդ և նման առարկաների պատրաստութիւնն անկասկած աւելի յարմար է հատարել կրօնաւորների ձեռքով, քան թէ սովորական բանուորների ու վարպետների: Այդ առարկաներն արտահանելու յայտնի կազմակերպութեամբ, որի օրինակը կայ արգէն, թեմական հոգևոր զպրոցական հաստատութիւնների և նոյնիքն հոգևորականութեան շահերը կարող էին ամենեւին չբավանդուել:

— Եկեղեցու զարդարանք որմնանկարներով՝ ինչպէս կարելի է դատել առաջնորդների ծխական եկեղեցիներին այցելելու նկարագրութիւններից և ուրիշ տեղեկութիւններից՝ տեղ տեղ մեծ հոգս է պատճառում միաբաններին: Հոգևորականները, որոնք եկեղեցական սրմնանկարների նշանակութիւնն անհրաժեշտ են համարում աղօթողների մէջ երկիւղածութիւն ներշնչելու համար, ցաւ են յայտնում, որ ինչպէս սրմնանկարը՝ նոյնպէս և պատկերազրութիւնն եկեղեցիներում, եկեղեցական զեղարուեստի կողմից գոհացուցիչ զրութեան մէջ չէ. բացի սրանից, առճարները զարգարելիս՝ սեղանը միշտ ի նկատի չի առնուում: Աեղանք Աստուծոյ փառքի տեղն է, պէտք է գերադանցի յա-

տուկ բարեզարդութեամբ: Ի մասնաւորի ցանկալի կը լինէր պատշաճ կարգի մէջ դնել խաչկալներն սեղանի կողմը: որը մինչև անգամ հարուստ եկեղեցիներէց մեծ մասն մէջ չի ծածկուած և խաչկալներն կողմը իւր շրջանակներով ու նեցուկներով անհաճոյ տպաւորութիւն է թողնում:

— Իրիւտակի արքեպիսկոպոս Տիխօնը հարկաւոր համարեց Իրիւտակի թեմի ժողովրդի բարոյական-կրօնական կեանքը բարձրացնելու համար Իրիւտակի Ս. Խնովկէնտիսսի միաբանութեան մեծ քանակութեամբ Տրօիցկեան թերթեր և ուրիշ հրատարակութիւններ ուղարկել, որոնք հարբեցութեան, հայհոյութեան, անբարոյականութեան և քրիստոնէական պարտերը կատարելու անհոգութեան դէմ են ուղղուած: Թերթերն, առում է սրբազանը, թող կարգացունն եկեղեցիներում, աներում և ամեն տեղ: Թերևս բարի սերմը, Աստուծոյ ողորմութեամբ, բարի պտուղ տայ»:

— Թեմական հրատարակութիւնների աշխատակիցները, որոնց հետ և հոգևորականները, վշտակցութեամբ կանգ են առնում եկեղեցական կրօնական կեանքի պակասաւոր կողմերի վերայ՝ ժամերգութեան ժամանակ: Церк. Вѣст. առում է: Арханг. Е. В.-ում կարգում ենք «Ան յորձից առած լիաստեր: Հսկումն է Աստուածամօր շարականն են երգում: Սարկաւազը խնկարկում է եկեղեցում. խնկարկելու ժամանակ ս. պատկերների առաջ սարկաւազը ամենևին չի խոնարհում գլուխը: Անա նա հանդիպում է ծանօթի, կանգնում է ամձարի մէջ, սկսում է նրա հետ դատողութիւն անել և մինչև անգամ ծիծաղել: Վերջացնելով զրոյցը, շարունակում է խնկարկութիւնը: Իսկ Աստուածային պաշտամունքը շարունակում է իւր կարգով...»:

Ուրիշ օրինակ: Թաղման կարգ է կատարւում: Տաճարում շատ աղօթողներ կան: Այս տխուր կարգի ժամանակ թաղման կարգը կատարողներէց մէկն յաճախ յետ է նայում, շարժումներով դիտողութիւններ է անում: Այս դեռ քիչ է. գրպանից հանում է սանդրը, վեր է առնում գլխից կամիլաւական և սկսում է սանդրել իւր գանգուրները միևնոյն ժամանակ երգակցելով միևնոյներին. «Հանգո՛, Տէր, զհոգի ննջեցելոյս... վայ և եղճիկ»:

Աշխարհական ջերմեռանգ մարդիկ, յատկապէս կանայք երբեմն վրդովուած խօսում են և այն մասին, որ քահանան վերջացնելով օրինակ եկեղեցու մի կողմում պատկերի առաջ աղօթքը և ուղղուելով գէպի միւս կողմը՝ նոյնպէս աղօթք ասելու համար, զնալիս է սկսում աղօթքը, կամ երբ տիրացու երգիչը ակներև կատարում է իւր գործն առանց ուշադրութեան՝ անհոգութեամբ, առանց միտ դնելու՝ թէ ինչ է անում և ուր է

դանւում: Երբեմն մի քանի օրթօդօրս եկեղեցիներում պախարակելի կերպով ժամերգութիւնը նմանեցնում են կաթ ուլիկահանին ու բողբոջահան եկեղեցիների կարգերին, ուր պաստօրը կամ քօսեօնը (կաթ ուլիկ լէճ քահանայ) ժամերգութեան ժամանակ կանգնում են սեղանի առաջ՝ բոլորովին վերացած և ոչ սրի հետ խօսակցութիւն չեն թոյլ տալիս: Այս և նման դէպքերում դուցէ՛ բաւական շարժանցութիւն կայ, բայց ցաւալին արդէն այն է, որ կան այդ խօսք ու զրոյցներ և որ դրանց առիթ տրւում է:

Այս ճիշտ նկարագրութիւն է և մեր՝ հայ եկեղեցում կրկնող անկարգութիւնների:

— Զարայիպեան հոգևորականութիւնը գեղեցիկ միջոց է որոշել և մասամբ կատարում է դիւզական դեռահասներին մէջ հաւատան ամբապնդելու համար: Զարայիպեան Զիտա քաղաքում և մի քանի դիւզական ծխերում սովորութիւն կայ եկեղեցական ծխական դպրոցներն աւարտող տղաներին ու աղջիկներին մի մի Աւետարան տալ: Զարայիպեան պատգամաւորների ժողովը խորհուրդ տուեց այս սովորութիւնն ամբողջ թեմում գործադրել:

— Կրօնական դասախօսութիւններ ժողովրդի զանազան դասակարգերի համար՝ յատկապէս հասարակ դասակարգի համար կատարւում են բաւական շատ տեղեր՝ թէև ոչ ամենուրեք շարունակաբար: Մի քանի քաղաքներում այդպիսի ընթերցամունքների, նոյնպէս և եկեղեցական այլ կարիքների համար կան որոշուած յատկապէս այդ նպատակի համար յատուկ շինութիւններ եկեղեցական, վանական և առաջնորդական աներում: Նոյնպիսի ընդարձակ եռայարկ տուն շինուած է Քեազանի նահանգի Եգորեսկում: Այդ տունը կոչւում է «Եգորեսկու Կարմիր աւագ եկեղեցու եկեղեցական ծխական տուն»։ Այս տունն իւր միջոցներով շինել մասձեց Եգորեսկու տոհմական պատուաւոր քաղաքացի Ն. Մ. Բարդիպինը, բայց նրացանկութիւնն իրագործեց նրա որդին: Այդ տան մէջ պէտք է կատարուեն միսիօններին, ժամերգութիւնից դուրս, ընթերցամունքներն ու զրոյցները ստարօօրբեադցիներին (հին կարգերին հետևողներ) հետ: Այստեղ պէտք է գետեղուի եկեղեցական հասարակաց մատենադարանն ու եկեղեցական դպրոցը և կատարուին տեղւոյն Ս. Գէորգի միաբանութեան ժողովներ:

Միտք է ծագել Իրկուասկում թեմական տուն շինելու ի յիշատակ Իրկուասկի առաջին եպիսկոպոս ս. Իննուիկէնասի և Նշխարաց զիւտի հարիւրամեակի առիթով՝ որ կատարուելու է 1905 թ. փետրվարի 7-ին:

Որոշուած է նոյնպիսի տուն շինել Կուրսկումն էլ. հոգևորականութեան վերջին ժողովն՝ այդ նպատակին յատկացրել է միանուազ 2000 բուրլի:

— Եկեղեցական հոգերն ամերուրեք իրաւաբանօրէն հաստատուած չեն իբրև սեփականութիւն: Ուստի և շատ անգամ ծագում են վէճեր եկեղեցական միարանութեան և հոգերը յափշտակողների միջև: Դրա համար էլ Օբլոլի թեմական օրագիրը քացատրել է, թէ ինչ պէտք է անի քահանան՝ եկեղեցական հոգերը յափշտակուելու դէպքում. և խորհուրդ է տալիս միաբանութեանն ու երեսփոխանին հոգալ ձեռք բերել հաստատութեան վիայականներ եկեղեցական հոգերի համար և չափել տալ այդ հոգերն արքունի երկրաչափները ձեռքով: Թեմական իւրաքանչիւր գործօն պարտաւոր է մասնաժողով կարգել թեմի միջի եկեղեցական հոգերն ի յայտ ածելու և միջոցներ ձեռք առնելու՝ նրանք ապահովելու համար:

Ռուս Օբլոլի հոգերը վարչական անձինք և հաստատութիւններն ամենաբարձրից սկսած մինչև ամենաստորը, ինչպէս երևաց Перк, Вѣст. շաբաթաթերթի մէջ բերուած քաղուածքներից, հոգում են եկեղեցու պայծառութեան, նրա նիւթական ապահովութեան, պաշտօնեաները քարեկարգութեան, հաւատացեալների հոգու փրկութեան համար: Ահա այս ջանքերը քաջալերելու համար թագաւոր կայսրն ամենաողորմածաբար տարւոյս յունվարի 1-ին բարեհաճել է ռուսաց Սրբազան Սինոդի օրեր-պրօհուրօր 4. Պ. Պօբեդօնօսցեկին շնորհել ս. Անդղբէաս նախակոչ առաքելոյ կարգի ադամանտեայ նշանները:

ՕՐԹՕԳՈՒՔՍ ՅՈՒՆԸԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Կ Պօլսոյ յոյն պատրիարքարանի ուսումնարանական ամենաբարձր հաստատութիւնն է Խաչիկ կղզու աստուածբանական դպրոցը, որ պատրաստում է եկեղեցու համար ոչ միայն ստորին՝ այլ և բարձր պաշտօնեաներ. դպրոցը իւր գոյութեան յիսնամեակում միշտ օրհնակալական պատրիարքների հոգածութեան առարկայ է եղել: Ի մասնաւորի՝ Յովակիմ Գ. պատրիարքը դեռ իւր առաջին պատրիարքութեան օրով (1878—84 թ.) կարգադրել էր, որ Սինոդը միայն այդ դպրոցի սաներից ընտրել եպիսկոպոսներ եկեղեցու համար, երբ արդէն նրանք վարելով ստորին պաշտօններ, առաջուց պատրաստուած կը լինին իրանց

մեծ կոչմանը: Նորերումս պատրիարքը սուրբ Սինոդին նոր դե-
կուցումն ներկայացնելով՝ շեշտում է Սալկինի դպրոցի բարձր
նշանակութիւնը, որի ուսման կանոնադրութիւնն անցեալ տարի
փոխուել է՝ ընդարձակելով աստուածաբանական դասընթացը:
Այս յոյս է տալիս՝ որ դպրոցի լաւ ընթացաւարաններն արժանա-
ւորութեամբ կը ծառայեն եկեղեցուն եպիսկոպոսի աստիճանով,
միայն անհրաժեշտ է, որ դպրոցի սաներն իրանց կրթութիւնը կա-
տարելագործեն՝ գործնականապէս ծանօթանալով թեմի վարչու-
թեանը և թեմականները կեանքի հետ: Իրա համար էլ աստուա-
ծաբանութեան բոլոր ընթացաւարաններն, աւարտելով Սալկինի
դպրոցն՝ ամենաբիշք երեք տարի պէտք է ծառայեն պատրիարքա-
րանի գաւառական թեմերում. այնուհետեւ նրանց կը արուեն այս
կամ այն պաշտօններ պատրիարքարանում, որից յետոյ Սինոդը,
նայելով աստուածաբանութեան ընթացաւարտի անձնական
արժանաւորութեան, կը նշանակի եպիսկոպոս կամ միտրօպօլիտ:
Այս միջոցն առանց բացառութեան պէտք է գործադրուի բոլորի
վերաբերութեամբ էլ: Այս մտքով էլ սուրբ Սինոդը սրտշումն է
կայացրել և դպրոցի վերատեսուչ Սաաւրոպօլի միտրօպօլիտ
Ապօստոլին գրուել է պատրիարքական համապատասխան թուղթ:

— Կ. Պօլսոյ յոյն պատրիարքարանն առանձին ուշադրու-
թիւն է դարձրել եկեղեցական երգեցողութեան վերայ: Յայանի է
որ յոյն Արևելքում գործադրուում է միաձայն և ոչ քառաձայն
երգեցողութիւն: Ընդ քրիստոնէական և բիւզանդական երգե-
ցողութեան իսկականն է միայն մեղեդին: Այս մասին Արևելքը
պահպանել է եկեղեցու հին աւանդութիւնը, որը ուրիշ օրթո-
դոքս երկրներում, Արևմուտքի ազգեցողութեան տակ, խախտուել
է: Այժմ էլ յոյները սուրբ են պահում հին աւանդութիւնը՝
երգեցողութեան վերաբերութեամբ: Այս նպատակով Կ. Պօլսում
կազմուել է «եկեղեցական երգեցողութեան ընկերութիւն», որի
ջանքն է տեսականապէս մշակել եկեղեցական երգեցողութեան
հարցն՝ ի նկատի ունենալով և նրա պատմական անցեալը. նոյն-
պէս գործնականօրէն տարածել օրթոդոքս եկեղեցու իսկական
եղանակները: Ընկերութիւնն ունի իւր պարբերական հրատա-
րակութիւնը, որի մէջ գետեղում են եկեղեցական երգեցողու-
թեան պատմութիւնից ու տեսութիւնից մասնազխտական յօդ-
ուածներ: Այժմ այդ հրատարակութեան հինգերորդ հատորն է
գուրս եկել: Ընկերութիւնն իւր միջոցներով պահում է մի մաս-
նագիտական երգեցողութեան դպրոց էլ, որն արդէն դուրս է
թողել երրորդ շրջանաւարաների խումբը: Դպրոցի սաներն իբրև
տիրացու ծառայում են մայրաքաղաքի և գաւառական քա-

դաքնների եկեղեցիներում և իբրև ուսուցիչ ժողովրդական դպրոցներում: Նրանք եկեղեցական երգեցողութեան բարւոքմանը շատ են նպաստում՝ հաւատարիմ մ'նալով բիւզանդական միաձայն եղանակներին և բոլորովին արտաքսելով օտար ու թատառնական երգեցողութիւնը: Այժմ երգեցողութեան չորս դասարանեան դպրոցում սովորում են 187 աշակերտ, որոնցից մեք քանիսն աւարանէ են ուսումն Կ. Պօլսոյ ժողովրդական մեծ դպրոցում, որ հաւասար է գիմնադիպի: Ընկերութիւնը վայելում է Յովակիմ պատրիարքի հովանաւորութիւնը, որ խիստ նախանձախնդիր է ժամերգութեան վերաբերութեամբ եկեղեցական աւանդութեանը: Երգեցողութեան ընկերութեան նախագահն է Սինօզի անդամ, եփեսոսի միաբօսօլիա Յովակիմը, իսկ նախագահի օգնականը՝ Գրեդօրիոս Պապադօպուլը, որ շատ հմուտ է եկեղեցական երգեցողութեան պատմութեանն ու տեսութեանը: Երգեցողութեան ընկերութիւնն իւր տարեդարձը հանդիտաւոր կերպով կատարում է Դեկտեմբերի 4-ին ս. Յովհան Գամակացու տօնին:

Անցեալ տարի Յովակիմ պատրիարքը սինօզի անդամների հետաներկայ գանուելով, հանդիսապէս պատուեց տարեդարձը, ժողովում օրհներգներ կատարուեցին ի պատիւ սուլթանի և պատրիարքի, իսկ ուսումնական ֆիլանթիպը «Յունական ազգային երգեցողութեան մասին» մի ճառ կարգաց: Երգեցողութիւն սերողներն ու բարեգործներն յօժարակամ հանգանակութիւն արին յօգուտ երգեցողութեան ընկերութեան և նրա ամենահարկաւոր դպրոցի:

(Երբ յունական եկեղեցին հետամուտ է իւր հին եղանակները վերահաստատելուն, մեր հայոց եկեղեցում, ամեն մէկը, որ կարգում է ձայնանիշները, իրան առաջնակարգ հեղինակ երաժշտապետ երևակայելով՝ ալլանդակում է եղանակներն ինչպէս կամենումէ, գժբախտութիւնն այն է, որ այդպիսիք քաջալերողներ միշտ ունենում են. ժամանակ է, որ վերջ գրուի այդ կամայականութեան:)

— Կիպրոսի ինքնագլուխ եկեղեցին երեք տարի է, ինչ արքեպիսկոպոս չունի. բարձր և ստորին հոգևորականութիւնը թեկնածուի պատճառով կուսակցութիւնների է բաժանուել, աշխարհականներն էլ անմասն չեն կուսակցական պայքարից. մէջ է մտել և անգլիական իշխանութիւնը. եկեղեցական գործերը այդ պատճառով կանգ են առել:

Церков. Вѣст.-ը յունարէն «Կոնստանդնուպօլիս» լրագրից այդ առիթով դնում է Կիպրոսի թղթակցութեան հետևեալ կտորը.~

Մենք չունինք լաւ պատրաստուած կղեր, գրկուած ենք իւր սուրբ կոչման նշանակութեանն արժանաւոր հոգևորականութիւննից: Մեր հոգևորականութիւնը գտնուում է խորին ազիատութեան մէջ, ուստի և ժողովրդի համար մեծ գայթակղութիւնների և չարիքի պատճառ դառնում: Ամբողջ Կիպրոսում սիրուած են բոլորովին ազէտ հոգևորականներ, որոնք հազիւ կարողանում են կարգաւ... Անհրաժեշտ է այդ չարիքի առաջն առնել. հակառակ դէպքում էլ ում կարող է դիմել կրօնական խնդիրներում մեր անբաղդ ժողովուրդը և ուր կը գտնի իւր կեանքի համար խրատական օրինակներ:... Բայց մենք չունենք եկեղեցու հոգևոր գլուխ, որը պէտք է ղեկավարէր ժողովրդի կեանքը...»:

Ըստ Церкв. Вѣст.-ի արքեպիսկոպոս չընարուելու գլխաւոր արգելքներն են անգլիացիք և բողոքականներ, որոնց շահերին ձեռնառու է եկեղեցու երկար ժամանակով խեղճութեան մէջ մնալը: «Կիպրոսի եկեղեցու ցաւալի զրութիւնը, ասում է Церкв. Вѣст.-ը աւելի ևս հաստատում է, թէ ինչպէս վտանգաւոր և միատակար է միջամտութիւնը աշխարհական՝ այն ևս օտարադասան իշխանութեան՝ սրբափօղաւ եկեղեցու գործերում»:

—Յունական ազգը միշտ աչքի է ընկնում իւր առատ նուիրաբերութեամբ իւր ազգային — եկեղեցական հաստատութիւնների անունով: Կան շատ բարեգործական հաստատութիւններ, բայց բոլորից գլխաւորն է Կ. Պօլսոյ «ժողովրդական մարդասիրական հաստատութիւնը, որի շրջանակի մէջ են հիւանդանոց, ազատանարան՝ երկու սեռի զառամեալների համար և որբանոց: Այս հիմնարկութիւնները պահպանում են պատրիարքարանում գտնուած եկեղեցական ժողովրդական գանձարանի հաշուով. այդ հաստատութիւններն օգնութեան են հասնում թէ մայրաքաղաքի և թէ գաւառացի կարօտեալներին, միայն հարկաւոր է, որ տեղական առաջնորդից յանձնարարական ունենան: Մօտ ժամանակներս մայրաքաղաքի Գանար թաղում, որտեղ գտնուում է և պատրիարքարանը, հաստատուել է «Բարեգործական եղբայրութիւն» Պատրիարքի փոխանորդ Կալլիսիի ղեկավարութեամբ: «Բարեգործական եղբայրութեան» նպատակն է հիւանդներին ու կարօտալներին օգնել: Անցեալ տարի եղբայրութիւնը ծախս է ունեցել 21,411 զուռուշ. (զուռուշը 8 կոպեկ): Եղբայրութեան եկամուտները կազմում են անգամների տարեկան և արտակարգ տուրքերից, գանձանակներից և եկեղեցիների օժանդակութիւնից: Գանարի բարեգործական եղբայրութիւնը դեռ նոր է

սկսում իւր գործունէութիւնը: Արտո՛հեաւ եղբայրութիւնը դըստնւում է Յովակիմ պատրիարքի հոյանաւորութեան տակ, շատ հաւանական է, որ հնարաւորութիւն կունենայ զգալի կերպով թեթեւացնելու հիւանդ և ծեր յոյների վիճակը: Բարեգործական հաստատութիւնների կարգում աչքի են ընկնում Տատաուլի ծխի ընկերութիւնը, որ 43 տարի է գոյութիւն ունի:

— Աթէնքում կայ քրիստոնէական հնութիւնների ընկերութիւն, որի նպատակն է դանել, պահպանել և ուսումնասիրել եկեղեցական հնութիւնները: Ընկերութիւնը քիչ ծառայութիւն չէ մատուցել հնախօսական դիտութեանը, բայց դժբախտաբար նիւթական միջոցները խիտ սուղ են և հարկադրուած է դիմել մասնաւոր բարեգործների գործակցութեանը: Ընկերութիւնն յոյսը դրել է գլխաւորապէս հոգևորականութեան և վանքերի վերայ: Մի քանի տարի առաջ նրա խնդրանքով յունական ս. Սինօզը շրջաբերական թղթով դիմեց յոյն թագաւորութեան վանքերին, առաջարկելով օգնութեան հասնել այդ օգտակար ընկերութեանը իրանց կարողութեան չափով, բայց ոչ մի վանք էլ այս կոչին չըպատասխանեց: Այժմ ընկերութիւնը դիմել է թեմական իշխանութիւններին, նահանգապետներին, վանական խորհուրդներին և յոյն վանքերի արեղաններին՝ նկարագրելով իւր ծառայութիւնները և բացատրելով իւր նպատակը: Արպէս զի իւր նպատակին հասնի, ընկերութիւնը՝ ստիպուած է դիմել եկեղեցական գործերի նախարարին՝ հարկադրելու արեղաններին, որ նրանք իրանց կարողութեան չափ նուիրաբերութիւն անեն ընկերութեան կասսային:

— Եկեղեցական գործերը Բուքովինայում ցաւալի դրութեան մէջ են գտնուում: Թէև 1900 թ. Մայիսին Բուքովինայի Սէյմքորոշել է դիմնագիայի ուսու աշակերտներից թողակաւորներ պահել ուսուպրաւօսյաւ եկեղեցու քահանաներ և ծխական դպրոցների ուսուցիչներ պատրաստելու և այս որոշումը կրկնել է 1901 թուին, բայց Աւստրիայի դաւանութեան նախարարը դեռ չիւրիւր գեկուցումն չէ արել կառավարութեանը և Չեռնովիցի միտրօպոլիտական կոնսիստորիան վախճանուած ուսու քահանաների տեղ նշանակում է ուսումնացի քահանաներ՝ թէև ծուխը կազմուած է ուսու ազգաբնակութիւնից, ձգակելով անշուշտ Բուքովինայից դուրս բշել ուսու հոգևորականութիւնը: Կոնսիստորիան վանքերին ուսու վանահայր է նշանակում միայն ուսումնացիներ: Դասաւանդութիւնը Չերնովիցի սեմինարիայում յանձնում է ուսումնացիներին, ուսու զառամեալ քահանաներին ահամայից է օգնական տալիս, իսկ ուսումնացիներին ակներև

պաշտպանում է զանազան միջոցներով: Ռումինական և աւստրիական յայտնի անբարեացակամութեան առթիւ զէպի ուսմաներն աւստրիական պալատի Բուքովինայի պատգամաւորները պաշտպանելով սերբերին, չեխերին, խորվաճաներին, բոկոբ ներկայացրին զաւանորթեան նախարարին, որով հարցնում են. ե՞րբ և ինչ միջոցով է մտադիր կարգի բերել Բուքովինայի ուստի տղուրդի և նրա հողէտրականութեան զրուծիւնը: Յօժանր է նա իրագործել Բուքովինայի Սէյմի 1900 թուի որոշումն, զիմնադրաների ուստի աշակերտներից, որոնք կը ցանկանան յետոյ քահանայ լինել, որոշ թուով թոշակաւորներ պահելու:

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Սերբ. Յեժ. -ը (№ 1) «Պատմութեան արդի ձգտումները» վերնագրով տպել է իտալիայից պրֆ. Լեվիցիու թղթակառութիւնը, որ թարգմանաբար մէջ ենք բերում. — Լեոն Ժ. Մեծը իւր համեստ և չը նախատեսուած յաջորդին ժառանգութիւն է թողել մի ծանր բեռ՝ — հրատապ և ոչ զիւրեաւ մտնելի խնդիրների մի բեռ: Դրանց մէջ առաջնակարգներն են զրամական խնդիրը, Ֆրանսիական հատարակապետութեան հետ յարաբերութեան խնդիրը և վերջապէս Իտալիայում նոր եռանդ առած «քրիստոնեակրատիա» կոչուողնի խնդիրի:

Բանից դուրս է գալիս՝ որ սաստիկ ժլատ և եկեղեցուօգտին յաճախակի յոբելեաններ սարքող Լեոն Ժ. -ը Վատիկանի գանձարանը այնպիսի զրուծեան մէջ է թողել, որ իւր մահից միայն մի քանի ամիս յետոյ քիչ է մնում՝ որ Վատիկանը իրան սնակ հրատարակի: Մինչդեռ պապի մահից յետոյ հռչակուեց, թէ նա, զրկելով իւր ազգական գրաֆ Պեչչի տոհմը, ահագին զրամազլուխ է թողել եկեղեցուն:

Կարգինալներից մէկն այս օրերս, Լեոն Ժ. -ի մահուան 6-րդ ամսին ներկայացնում է Պիոս Ժ. -ին 40 միլիոնի տեղ 20 միլիոն: Որպէս թէ Վատիկանում մշակները մի պահարանի մէջ գտել են 9 միլիոն ոսկի, ոմանք ասում են զրա կէտը. գրում են, հերքում են, մեկնութիւն են տալիս: Այդ բոլոր զրոյցներն էլ նսեմացնում են յիշատակն այն պապի, որ քիչ առաջ փառաբանուում էր ամեն բարեմասնութեամբ: Երկրորդ, այդ զրոյցներն եթէ նպատակ էլ չունենան, ի վնաս Վատիկանի կը սառեցնեն հաւատացեալների սրտերը, որ այնքան էլ տաք չէ «Ս. Պետրոսի